ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2026 թվականի N 1354 - Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ ու 6-րդ և 9-րդ հոդվածի 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության կողմից միջազգային ռազմական աջակցության ծրագրի շրջանակներում նվիրված՝ 325,408.0 (երեք հարյուր քսանհինգ միլիոն չորս հարյուր ութ հազար) դրամ հաշվեկշռային արժեքով POLARIS PROSTR S4 Titan մակնիշի 16 միավոր ձնագնաց մեքենաները (այսուհետ՝ գույք)՝ համաձայն հավելվածի, և որպես պետական սեփականություն ամրացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանի

հետ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրատվության պայմանագրի կնքումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ